

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՇԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան

«05» «02» 2018թ.

Հայաստանի Հանրապետության **գյուղատնտեսության նախարարությունը** ի դեմս **նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Կիրակոսյանի** (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «**Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը** ի դեմս **տնօրեն Մ.Մանուկյանի** (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է «Հայանտառ» ՊՈԱԿ կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ մասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Անտառպահպանական ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել որոշմամբ նախատեսված՝ «Անտառպահպանական ծառայություններ» (04.02.02.01) ծրագրով 1981184300 (մեկ միլիարդ ինը հարյուր ութսունմեկ միլիոն հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Շնորհառուն պարտավորվում է ծրագիրն իրականացնել, որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**2.1 Շնորհառուն իրավունք ունի՝**

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

## **2.2. Շնորհառուն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

## **2.3. Շնորհատուն պարտավոր է՝**

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին N 2 և N 4 հավելվածներով սահմանված ձևերի ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրին և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

## **2.4. Շնորհառուն պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ.

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները (N2 հավելված) ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ ամսեկան հաշվետվությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը՝ համաձայն սույն պայմանագրի N4 հավելվածի, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

### **3. Մոնիթորինգը**

3.1. Շնորհատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհատուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհատուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

### **4. Վճարման կարգը և ժամկետները**

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ վճարել 1981184300 (մեկ միլիարդ ինը հարյուր ութսունմեկ միլիոն հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 165428000 (հարյուր վաթսունհինգ միլիոն չորս հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին, որպես կանխավճար:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ՝ համաձայն N 4 հավելվածի, Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար վճարում է Շնորհառուին հաշվետվություններն ընդունվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Եռամսյակի ավարտից հետո Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N 2 հավելվածով ներկայացված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշներին համապատասխան՝ համաձայն N 3 հավելվածի:

### **5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

**6. Պայմանագրի գործողության ժամկետը**

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

**7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ\_ՄԱԺՈՐ)**

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. Եզրափակիչ դրույթներ**

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակով, 10 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**


**Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ**

«Գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական շենք 3  
«Ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական  
վարչություն

ՀՀ 900011008258

ՀՎՀՀ 02508046




Ա. ԿՐՈՒԿՈՍՅԱՆ  
Կ. Տ

**Շ Ն Ո Ր Հ Ա Ռ ՈՒ**

«Հայանտառ» ՊՈԱԿ

ք. Երևան, Ա. Արմենակյան 129  
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
"Մյասնիկյան" մ/ճ



Ա. ՄԱՍԻՆՅԱՆ  
Կ. Տ

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր


Իրականացվելիք միջոցառման						
h/h	մուտքեր	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջին ժամկետը	պահանջարկի գումար (հազ.դրամ)
1.	Անտառպահպանական ծառայություններ	Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետության անտառների պահպանության աշխատանքների կատարման նպատակով 2018թ. պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհի տրամադրումը պայմանավորված է անտառային տնտեսության խթանման նպատակով պետության կողմից «Հայանտառ» ՊՈԱԿ-ին իր կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառային հողերի տարածքը կազմում է 342.4 հազ.հա /ընդհանուրի 75%-ը/, որտեղ անտառտնտեսվարում իրականացնելու համար գործում են կազմակերպության 19 անտառտնտեսություն մասնաճյուղեր, որոնք բաժանված են 80 անտառպետությունների և 510 պահաբաժինների, որոնց պահպանությունն իրականացնում են 80 անտառապետեր և 510 անտառապահներ: Անտառապահության աշխատանքներին ներգրավված են նաև մասնաճյուղերի 19 տնօրենները, 19 ավագ անտառապետերը, 11 տնօրենի պահպանության գծով տեղակալները, 22 անտառապահության ինժեներները, 17 անտառկուլտուրաների ինժեներները, 28 անտառային տեխնիկները և այլն:	Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս ունենալ 342.4 հազ.հա ապօրինի հատումներից, արածեցումներից, հողազավթումներից և հրդեհներից, պահպանված անտառային հողեր: Գնահատման չափանիշներն են՝ -ապօրինի հատումների և այլ ապօրինությունների արձանագրումը, -ապօրինությունների հայտնաբերման տոկոսի աճը -արձանագրված ակտերի շարժը	28.12.2018թ.	1426664,3

2	Անտառշինություն և անտառկառավարման պլանների կազմում	<p>Անտառակառավարման պլանների մշակումը բխում է ՀՀ Անտառային օրենսգրքը հոդված 15, կետ 1, ՀՀ անտառի ազգային ծրագրի 2-րդ հավելվածի 3-րդ կետի (անտառակառավարման պլանավորում (անտառաշինական նախագծերի մշակում) դրույթներից:</p>	<p>Արագածոտնի, Գյումրիի, Հրազդանի, Իջևանի և Սևքարի անտառտնտեսություն մասնաճյուղերի համար անտառկառավարման պլանների մշակում (ՀՀ Անտառային օրենսգրքը հոդված 15, կետ 1՝ Անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարման նպատակով կազմվում են համապատասխան նախագծեր, որոնք տալիս են անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:)</p>	<p>88030 հա-ի վրա անտառտնտեսությունների անտառշինական նախագծերի (անտառկառավարման պլանների) մշակումը թույլ կտա անտառային հողերի և անտառների վիճակի, անտառածակ տարածքների ծավալների մասին ունենալ ամբողջական տեղեկատվական բազա, որը հիմք կհանդիսանա կայուն անտառակառավարման համար:</p>	318000,0
3	Կադաստրի վարում	<p>Անտառային կադաստրի վարումը բխում է ՀՀ անտառային օրենսգրքի (հոդված 16 կետ 1), ՀՀ անտառի ազգային ծրագրի 2-րդ հավելվածի 4-րդ կետի 4-րդ (անտառի կադաստրի վարում (460.0 հազ. հա) ենթակետի դրույթներից:</p>	<p>ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջոցով ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 133-Ն որոշմամբ հաստատված «Անտառային պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգի» 3-րդ կետի համաձայն անտառային պետական կադաստրի վարում</p>	<p>Անտառային պետական կադաստրի արդյունավետ վարում 342.4 հազ. հա-ի վրա</p>	36000,0

4	Անտառների հաշվառում և գույքագրում	Անտառների պետական հաշվառումը և գույքագրումը թխում է ՀՀ անտառային օրենսգրքի (հոդված 16 կետ 3), ՀՀ անտառի ազգային ծրագրի 2-րդ հավելվածի 4-րդ կետի 2-րդ (անտառների հաշվառման իրականացում (460,0 հազ. հա) ենթակետի դրույթներից:	Անտառների և անտառային հողերի պետական հաշվառում, անտառների կայուն կառավարման, անտառների քանակական և որակական փոփոխությունների պարբերական գրանցման իրականացում 342.4 հազ. հա-ի վրա:	Համաձայն ՀՀ անտառային օրենսգրքի (հոդված 16 կետ 3) անտառների պետական հաշվառման ապահովում 342.4 հազ. հա-ի վրա:	200520,0
<b>Ընդամենը</b>					<b>1981184,3</b>


Շ ն ո ղ Ի ա ռ ու  
 ՀՀ գյուղատնտեսության նախարարություն  
 ք. Երևան, Կառավարական շենք N3  
 ՀՀ ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011008431  
 ՀՀ 02508046  
 Ա. ԳԻՐԱԿՈՍՅԱՆ



Շ ն ո ղ Ի ա ռ ու  
 «Հայաստառ» ՊՈԱԿ  
 ք. Երևան Ա. Արմենակյան 129  
 «Հայէկոնորմբանկ» ԲԲԸ "Մյասնիկյան" մ/ճ

ՀՀ 1639790166  
 ՀՀ 02508046



4.8

**Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց**

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը

Ծրագրի անվանումը

Նկարագրություն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրականության ներքո գտնվող անտառային տարածքների պահպանում և կառավարում, գույքագրում, հաշվառում, նախագծերի պատվիրում

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Անտառապահպանական ծառայություններ

h/h	Միջոցառումների անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2018 թվականին				Ծանոթություն
		I եռամսյակ պլանային	II կրճատյակ պլանային	9 ամիս պլանային	տարի պլանային	
I		III	IV	V	VI	VII
1	Կառավարվող անտառային տարածքներ (հազար հա)	342.4	342.4	342.4	342.4	342.4
2	Անտառախախտումների հարմարեցում (թիվ)	150	400	600	700	
3	Անտառվարավարման նախագծերի պատրաստում (հա), նախապատրաստական փուլ	88030	88030	88030	88030	88030
3.1	Անտառվարավարման նախագծերի պատրաստում (հա), դաշտային փուլ		88030	88030	88030	88030
3.2	Անտառվարավարման նախագծերի պատրաստում (հա), կամերալ և ավարտական փուլ					88030
4	Անտառների և անտառային հողերի հաշվառում և գույքագրում (հազ. հա), նախապատրաստական փուլ	342.4	342.4	342.4	342.4	342.4
4.1	Անտառների և անտառային հողերի հաշվառում և գույքագրում (հազ. հա), դաշտային փուլ		342.4	342.4	342.4	342.4
4.2	Անտառների և անտառային հողերի հաշվառում և գույքագրում (հազ. հա), կամերալ և ավարտական փուլ					342.4
5	Բնական վերածի մասնագրծինը կառավարվող անտառային տարածքներում (ընդհանուր տարածքի) (տոկոս)					8
6	Անտառային տարածքների պահպանման իրականացում					տարեկան

Շ Ն Ո Ր Հ Ա Ս Ռ Ռ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն  
Երևան, Կառավարական շենք N3

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական

Նախարարություն

ՀՀ 900011008431

ՀՀ 02508046

Ա. Կրկունյան  
Կ.Տ

Շ Ն Ո Ր Հ Ա Ս Ռ Ռ

«Հայանտառ» ՊՈԱԿ

Երևան, Մարտիկյան 129


ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի

Նախարարություն

ՀՀ 900011001166

ՀՀ 02508046

Մ. Սահակյան





Հավելված 3  
 2018 թվականի ֆեբրվարի 1-ին կնքված  
 N 26.4-5 պայմանագրի

**ԿԱՏԱՆՆ ԱՄՆԱԿԱՏՈՒՄ**

1. Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին	Բ	Ս	Ո	Մ	Ս	Լայն
04	02	02	02	01	104007	

վերջություն

4. գանձապետական բյուջետային հաշվի համարը **900011008258**

Ծրագրի անվանումը

«Անտառապահպանական ծառայություններ»

հազ. դրամ

Կ/Կ	Ձեռք բերվող ծառայությունների անվանումը	Բյուջետային ծախսերի տեսակագրքային հոդված	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեից, առողջական											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	տարի
1	Անտառապահպանական ծառայություններ	4637	1981184,3		165428,0	330857,8	495956,0	661055,0	826153,9	991252,0	1156351,0	1321449,9	1541362,0	1761273,0	1981184,3

**ՉՆՈՐՀԱՏՈՒ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն  
 Գ. Երևան, Կապույտաբլուզի 2/3  
 ՀՀ ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի գործառնական վարչություն  
 ՀՀ 900011008258  
 ՀՀ 02606046

**ՉՆՈՐՀԱՏՈՒ**

«Հայաստան» ՊՈՍԿ  
 Բ. Երևան, Կապույտաբլուզի 2/3  
 «Հայկոն» ՓԲԸ-ի մ/6

